Կազմված է 08.02.2021թ.. և բաղկացած է 10 թերթից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021թ-ի փետրվարի 16-ի N 17 -Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

_____Ա.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Կ.Տ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ՝ 19.02.2010թ

ԳՐԱՆՑՄԱՆ N 18. 210.00824
ՀՎՀՀ 09207283
19.02.2010թ. գրանցված կանոնադրության
թիվ _____փոփոխությունը գրանցված՝
ՀՀ արդարադատության
նախարարության
աշխատակազմի իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության կողմից

« _____» _____ 2021 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
/ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ/

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ԳՈՐԻՍԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԱԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սյունիքի մարզի «Գորիսի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ մարզադպրոցը պետական գրանցման համար՝ 18.210.00824) հանդիսանում է Սյունիքի մարզի Գորիսի «Ա.Օրդյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համար՝ 18.210.00826) իրավահաջորդը՝ համայնքի ավագանու 30.08.2019թ. թիվ 72-Ա որոշմամբ: Սյունիքի մարզի Գորիսի «Ա.Օրդյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավունքները և պարտականությունները անցնում են Սյունիքի մարզի «Գորիսի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ փոխանցման ակտին համապատասխան:

1.2.Սյունիքի մարզի «Գորիսի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (հետագայում մարզադպրոց) համարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային մարզական կազմակերպություն: Մարզադպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի համայնքն է այսուհետ՝ Հիմնադիր), որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի համայնքի ղեկավարը:

Մարզադպրոցը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի համայքի ղեկավարի 27.01.2010 թիվ 16Ա և Գորիսի համայնքի ավագանու 04.02.2010 թիվ 6Ա որոշումների համաձայն Սյունիքի մարզի Գորիսի մարզաառողջարանայինհամալիր համայնքային հիմնարկի (պետական գրանցման (հաշվառման) համարը 18.0113 վկայականի համարը Բ004789) վերակազմավորման ճանապարհով և հանդիսանում է նրան ամրացված իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

1.3. Մարզադպրոցի իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման պետական գրանցման) պահից:

1.4. Մարզադպրոցն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը և իր անվանումը (հայերեն, ռուսերեն, անգլերեն գրառումներով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:

1.5. Մարզադպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

(այսուհետ՝ Օրենք), Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.6. Մարզադպրոցն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Մարզադպրոցը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

1.7. Հայաստանի հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում դպրոցի պարտավորությունների համար: Մարզադպրոցն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.8. Մարզադպրոցի անվանումն է. հայերեն լրիվ՝ Սյունիքի մարզի «Գորիսի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

1.9. Մարզադպրոցի գտնվելու վայրը. Փոստային հասցեն. ՀՀ Սյունիքի մարզ ք. Գորիս, Մաշտոցի 3:

2. Մարզադպրոցի գործունեության առարկան ու նպատակը

2.1. Մարզադպրոցի ստեղծման նպատակն է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի մարզական գործունեության իրականացումը:

2.2. մարզադպրոցի հիմնական խնդիրներն են.

ա) պարապողների հայեցի դաստիարակությունը

բ) պարապողների բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը

գ) ֆիզիկական կուլտուրայի, սպորտի միջոցներով պարապողների առաջադիմության պահպանումը և ամրապնդումը

դ) ընտրած մարզաձևում պարապողների մարզական և մտավոր ունակությունների կատարելագործումը

ե) Սյունիքի մարզի և հանրապետության բարձրորակ մարզիկներով համալրումը:

2.3. Իր առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացման համար մարզադպրոցն

-Իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա իրականացնում է երկկողմանի և բազմակողմանի կապեր հանրապետության և օտարերկրյա մարզական կազմակերպությունների գիտական հիմնարկների և այլ կազմակերպությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ

-պայմանագրային հիմունքներով ներգրավում է այլ կազմակերպությունների կամ անհատների

-կատարում է տարատեսակ աշխատանքներ կադրերի պատրաստման, մասնագետների փոխանակման մարզական լուսավորչական այլ բնագավառներում

-իրականացնում է հրատարակչական գործունեություն:

2.4. Մարզադպրոցը կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված գործունեության տեսակներ: Օրենքով սահմանված գործունեուության առանձին տեսակներով մարզադպրոցը կարող է զբաղվել միայն լիցենզիայի

առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ մարզադպրոցը բացի լիցենզավորող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու, ապա մարզադպրոցը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

3. Մարզադպրոցի իրավական կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները

3.1. Պետական գրանցման պահից մարզադպրոցը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ: Մարզադպրոցը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող էիր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Մարզադպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա բանկերում հաշվարկային բանկային հաշիվներ (ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ տարադրամով):

3.2. Մարզադպրոցն իրավունք ունի.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, օգտագործել ու տնօրինել դրանք

-ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները

-հիմնադրի որոշումների կամ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել և օգտագործել սեփականությամբ իրավունքով իրեն պատկանող գույքը,

-մեկ տարուց ոչ ավելի ժամկետով իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնել վարձակալության:

3.3. Մարզադպրոցը իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

3.4. Մարզադպրոցը պարտավոր է

-օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություն,

-աշխատանքային պայմանագրեր կնքել մարզադպրոցի աշխատակիցների հետ

-պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատրելու կամ հարկ եղածին պես չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար

-հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը,
-ապահովել մարզադպրոցի փաստաթղթերի (մարզադպրոցի կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, մարզադպրոցի ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, տնօրենի հրամանների, հրահանգների ու կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը:
-կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴԻՐԸ

4.1. Մարզադպրոցի հիմնադիրը ունի մարզադպրոցի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
4.2. Մարզադպրոցի հիմնադիրն իրավունք ունի
-հետ վերցնել իր կողմից մարզադպրոցին ամրացված գույքը
-կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել մարզադպրոցի տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
-վերահսկողություն իրականացնել մարզադպրոցին ամրացված համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ
-օգտվել օրենքով և դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից
4.3. Մարզադպրոցի հիմնադիրը պարտավոր է.
-ապահովել մարզադպրոցի բնականոն գործունեությունը,
-չհրապարակել մարզադպրոցի գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ
-կատարել մարզադպրոցի նկատմամբ ստանձնած պարտավորությունները,
-պահպանել սույն կանոնադրության դրույթները:

5. ԴՊՐՈՑԻ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՇԱՀՈՒՅԹԸ

5.1. Մարզադպրոցը հանդիսանում է սեփականատեր՝
-մարզադպրոցի հիմնադրի կողմից սեփականության իրավունքով հանձնված գույքի,
-մարզադպրոցի գործունեության հետևանքով արտադրած արտադրանքի և ձեռք բերած գույքի,
-ստացած եկամուտների,

-ուսումնական վարձի գումարներից ստացված միջոցների (որոնք կարող են օգտագործվել բացառապես որպես աշխատավարձ և կոմունալ ու տնտեսական այլ ծախսերի կատարման նպատակով):

Մարզադպրոցի սեփականության ներքո կարող են գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց: Մարզադպրոցի գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը մարզադպրոցի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

5.2. Մարզադպրոցի հիմնադիրը մարզադպրոցին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ:

5.3. Մարզադպրոցի հիմնադիրը մարզադպրոցին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

5.4. Մարզադպրոցի մեջ մտնում են. մարզադպրոցը, ըմբշամարտի մարզադահլիճը և մարզադաշտը:

5.5. Մարզադպրոցը կարող է ձեռք բերել կամ վարձակալել օժանդակ շենքեր, մարզակառույցներ, մարզա-առողջարարական ճամբար, ուսումնական սարքավորման համապատասխան գույք և տրանսպորտի միջոցներ:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում մարզադպրոցի ստացած եկամուտները մարզադպրոցի սեփականությունն են:

5.6. Մարզադպրոցի գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

5.7. Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար սահմանված կարգով ու չափով հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները կատարելուց հետո մնացած սահմանված կարգով առաջացած մաքուր շահույթը մարզադպրոցն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների (մարզադպրոցի տեխնիկական հագեցվածության բարելավում, այդ թվում հիմնական միջոցների ձեռքբերման ճանապարհով, մարզադպրոցի աշխատանքային գործունեությունը ապահովող գույքի և նյութերի ձեռքբերում, գրականության ձեռքբերում, այլ միջոցներով մարզադպրոցի աշխատակիցների սոցիալական պաշտպանվածության բարձրացում, աշխատակիցների որակավորման բարձրացման նպատակով դասընթացների կազմակերպում կամ մասնակցություն կազմակերվված դասընթացներին և այլն) իրականացման համար:

6. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

6.1. Մարզադպրոցի սովորողները կարող են լինել սպորտով պարապելու համար բժշկական հակացուցում չունեցող երեխաները, դեռահասները, պատանիները և երիտասարդները:

6.2. Մարզադպրոց ընդունվողները ներկայացնում են դիմում՝ ծնողի համաձնությամբ:

6.3. Մարզադպրոց կարող են ընդունվել 5-16 տարեկան դեռահասները:

6.4. Սովորողների ընդունելությունը, մաղումը և ավարտը ձևակերպվում է մարզադպրոցի հրամանով:

6.5. Սովորողների փոխադրումը հաջորդ ուսումնական տարի իրագործվում է մարզչական խորհրդի որոշմամբ՝ հիմք ընդունելով սովորողների կողմից ընդհանուր և հատուկ՝ մտավոր և ֆիզիկական պատրաստության պահանջների կատարումը:

6.6. Մարզադպրոցի սովորողները իրավունք ունեն օգտվելու մարզադպրոցի կառույցներից, գույքից և ստանալ համազգեստ՝ մարզակոշիկ, անհատական օգտագործման մարզագույք ըստ սահմանված կարգի:

7. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

7.1. Մարզադպրոցի կառավարման մարմիններն են. մարզադպրոցի հիմնադիրը և տնօրենը:

7.2. Մարզադպրոցի կառավարման բարձրագույն մարմինը մարզադպրոցի հիմնադիրն է, որն իրականացնում է մարզադպրոցի ընդհանուր կառավարումը և որն ունի մարզադպրոցի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Մարզադպրոցի հիմնադիրը ապահովում է մարզադպրոցի բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում սույն կանոնադրությամբ սահմանված գործունեության չկատարման կամ անպատշաճ իրականացման համար:

7.3. Մարզադպրոցի հիմնադրի իրավասությանն են պատկանում.

1. Մարզադպրոցի կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, մարզադպրոցի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

2. Մարզադպրոցին սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմի հաստատումը,

3. Մարզադպրոցին ամրացվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կազմի հաստատումը,

4. Մարզադպրոցի վերակազմակերպումը,

5. Մարզադպրոցի լուծարումը,

6. Մարզադպրոցի լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների լուծարման անփոփիչ լուծարման միջանկյալ և լուծարման հաշվեկշիռներ հաստատումը

7. կազմակերպությունների հիմնադրումը

8. կազմակերպություններում մասնակցության մասին որոշումների ընդունումը,

9. Մարզադպրոցի կառավարման համակարգի սահմանումը, մարզադպրոցի տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

10. Մարզադպրոցի գործունեության վերահսկողության իրականացումը,

11. Մարզադպրոցի մասնագիտությունների և մասնագիտացումների անվանացանկերի հաստատումը,

12. ըստ մասնագիտությունների ուսումնական պլանների հաստատումը,

13. Մարզադպրոցի աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

14. Աուդիտի իրականացման որոշումն ընդունելը,

15. Մարզադպրոցի տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը,

16. Մարզադպրոցի շահույթի ու վնասների օգտագործման կարգի մասին որոշման ընդունումը,

17. Մարզադպրոցի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը,

18. Մարզադպրոցի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ կատարելուն համաձայնություն տալը,

19. Մարզադպրոցի ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի հաստատումը,

20. Ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:

Մարզադպրոցի հիմնադիրն իրավունք ունի որոշումներ ընդունել նաև օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված ցանկացած այլ հարցի շուրջ:

7.4. Մարզադպրոցի մարզական ֆինանսական և այլ գործունեության ղեկավարումը իրականացնում է տնօրենը, որին նշանակում և ազատում է հիմնադիրը 3 տարի ժամկետով: Տնօրեն կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետությունն գործունակ ցանկացած քաղաքացի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Մարզադպրոցի և մարզադպրոցի տնօրենի միջև աշխատանքային պայմանագիրը հիմնադրի անունից ստորագրվում է քաղաքապետի կողմից: Պայմանագրում սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, փոխհարաբերությունները հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման հիմքերը, այլ դրույթներ, որոնք կողմերը կգտնեն անհրաժեշտ: Տնօրենը լուծում է բոլոր հարցերը բացի մարզադպրոցի հիմնադրի իրավասությանը վերաբերող հարցերի: Տնօրենը օրենքով, հիմնադրի որոշումներով, աշխատանքային պայմանագրով սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ղեկավարում է մարզադպրոցի գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների այլ իրավական ակտերի, հիմնադրի որոշումների աշխատանքային պայմանագրի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար: Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով մարզադպրոցին, հիմնադրին, պետությանը, պատճառված վնասի համար, ընդ որում տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

Հիմնադրի անունից հանդես եկող պաշտոնատար անձը (Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի քաղաքապետը) պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել վերը նշված վնասի փոխհատուցման հարցը, հակառակ դեպքում նա կրում է լրիվ գույքային պատասխանատվություն: Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման համաձայնտնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

Մարզադպրոցի տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ ի շահ իր կողմից ներկայացվող մարզադպրոցի:

7.5. Մարզադպրոցի տնօրենը իր իրավասության սահմաններում

1. առանց լիազորագրի գործում է մարզադպրոցի անունից, ներկայացնում նրա շահերը պետության, նրա մարմինների, այլ կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում,

2. տնօրինում է մարզադպրոցի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

3. կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

4. արձակում է հրամաններ մարզիկների ընդունելության մասին,

5. տալիս է լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

6. բանկում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,

7. սահմանում է մարզադպրոցի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

8. հաստատում է մարզադպրոցի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին,

9. հաստատում է հաստիքներ,

10. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ,

11. կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

12. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում մարզադպրոցի աշխատակիցներին,

13. աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

14. սույն կանոնադրության 7.3. կետի 1,4-8,11-13,16,17-19 ենթակետերով սահմանված հարցերի մասին առաջարկություններ ներկայացնում հիմնադրին,

15. իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված կամ հիմնադրի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ:

7.6. Մարզադպրոցի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, հիմնադրի կողմից լիազորված անձը, օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ: Մարզադպրոցի տարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար հիմնադիրն իրավունք ունի ամեն տարի ներգրավել մարզադպրոցի, մարզադպրոցի տնօրենի հետ գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչի՝ աուդիտորի:

8. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

Մարզադպրոցը պարտավոր է ունենալ հետևյալ փաստաթղթերը.

1. մարզիկների ցուցակները, որոնք հաստատվում են մարզադպրոցի տնօրենի հրամանով.
2. Մարզադպրոցի աշխատողների աշխատանքի նշանակման և ազատման հրամանագիրք,

3. մարզիկների անհատական քարտեր,

4 . ուսումնամարզական պարապմունքների դասատախտակ,

5. մարզիչ-մանկավարժների աշխատանքի հաշվառման դասամատյաններ,

6. մարզադպրոցի աշխատողների անձնական գործեր,

7. մարզադպրոցը յուրաքանչյուր տարի հիմնադիր կազմակերպությանը և ՀՀ սպորտ վարչությանը ներկայացնում է վիճակագրական հաշվետվություն:

9. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1. Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս մարզադպրոցը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

10. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

9.1. Մարզադպրոցը, նրա հիմնադրի որոշմամբ, կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Մարզադպրոցը կարող է դատական կարգով վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Եթե լուծարվող մարզադպրոցի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջներըբավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

9.2. Մարզադպրոցն իրավունք ունի վերակազավորվել հարյուր տոկոս համայքային (Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի քաղաքային) մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրի:

9.3. Մարզադպրոցի լուծարման դեպքում մարզադպրոցի պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի քաղաքային համայքնի բյուջե:

9.4. Մարզադպրոցը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությաունը՝ դադարած, այդ մասին իրավաբանական անձանց գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից: